ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «09» սեպտեմբերի 2016թ.

2016թ-ի սեպտեմբերի 09-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ ԿԳՆ «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 11 հասցեում, տեղի ունեցավ ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Գայանե	Հարությունյան	ՀՀ ԿԳՆ «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսումնական աշխատանքների գծով տնօրեն.
Վահրամ	Աբիսողոմոնյան	ՀՀ ԿԳՆ «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնտեսական աշխատանքների գծով փոխտնօրեն.
Անահիտ	Բանդուկանյան	ՀՀ ԿԳՆ «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ:

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	ՀՀ ԿԳՆ «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի գնումների մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գայանե Հարությունյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձի և վերջինիս կողմից ներկայացված հայտի գնահատման մասին:
2. Մասնակցի կողմից առաջարկված գնի (գների), առաջին տեղ զբաղեցրած մասնակից որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Գայանե Հարությունյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 5 010 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

- ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը (այսուհետ՝ նաև մասնակից).

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- մասնակիցը հայտը պարունակող ծրարը կազմել և ներկայացրել է ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան,
- մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին,

Որոշվեց՝

1. Գայանե Հարությունյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ (ԵՐԻ), ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցը ներկայացրել է հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

Չափա-բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Մասնակցի անվանումը և առաջարկած գինը (գները) (ՀՀ դրամ)
		«Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ
1.	Կենտրոնացված ջեռուցման կաթսաներ	5 428 080

Հիմք ընդունելով այն, որ բավարար գնահատված հայտ ներկայացրած «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցում է ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի 1-ին չափաբաժնով գնում կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ մասնակցի հետ վարվեցին բանակցություններ առաջարկված գնի իջեցման նպատակով:

Բանակցություններին մասնակցում էր «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արթուր Շադունցը:

Բանակցությունների արդյունքում «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ի առաջարկած վեջնական գինը սահմանվեց 5 000 000 ՀՀ դրամ:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Հարությունյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Աբիսողոմոնյան _____

Ա. Բանդուկանյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____